տեսնիք, չզարմանաք, և ոչ վատ ասէք մեզ՝ սաբաբ փոփոխումն. ինչոր մեք գրեցինք՝ ժամանակու ճշմարիտ էր՝ և ժամանակաւ բազի բաներ կու փոխվլի. ամա մեր գրածն բոլորովլիմբ սուտ չէ գտանալու։ ողջ լեր. և լեր բանասէր։

Աֆրիկու ցամաքն ունի Ասիայ երկիրն. ուստի՝ բրինձ, շաքար, խուրմայ, քաթան, ղահվա՝ խինա, ոսպ, ունտ՝ և այլ բարիք կու գան։ Արաբստան՝ ուստի նուշ՝ թուզ՝ զէյթուն՝ չամիչ, վուշ, լիմոն, նարինջ՝ խուրմայ, սպիտակ մեղր, շաքար, և այլ բարիք, ինչպէս, ոսկի՝ արծաթ՝ պղինձ. որ 'ի Փէս՝ և 'ի Մառօք գտանին։

Նուբիայ՝ որ ունի ոսկի՝ մուշկ՝ սանդալ՝ աբանոս՝ և այլինչ։ Գինէա՝ ուր առատութի շաքարի՝ բրնձի՝ ոսկւոյ՝ և այլ բարեաց։ Հաբաշստան՝ որոյ մասունքն են՝ Լօանգ՝ Կոնգ՝ Անգօլա՝ Մօնօմօտօպա՝ Մօնօմուգ՝ Կաֆրստան՝ Զանգեբար՝ Աջեան՝ և այլ։ Հասարակօրէն Հաբաշստան ունի առատութիւն զանջաֆիլի՝ շաքարի՝